**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «22-ը» մարտի 2018թ.
ժամը $11^{00}$

Ընդունել ի գիտություն, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի ՊԺԿ-ի 20.03.2018թ. N 154/ԴԿԱ հրամանով հանձնաժողովի կազմում տեղի է ունեցել փոփոխություն և ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյանի փոխարեն որպես հանձնաժողովի գնահատող անդամ է սահմանվել ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյանը:

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բադալյան:
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին Ա/Ձ Հակոբ Առաքելյանի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, սակայն վերջինիս կողմից չի ներկայացվել ընթացակարգի հրավերի N 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ նիստը շարունակել այդ համապատասխանությունը շտկելուց հետո:

***1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի. իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են::***

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակցի կողմից ներկայացված շտկման քննարկման վերջնաժամկետի հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Գնահատող(ԳԱՊ)** Ս. Աբովյան

**Գնահատող** Ա. Պապյան

**Գնահատող** Ա. Մաղաքյան

**Գնահատող** Հ. Բաղալյան

**Գնումները համակարգող՝** Ռ. Մարդոյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «28-ը» մարտի 2018թ.
ժամը $11^{00}$

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1. Ա/Ձ Հակոբ Առաքելյանի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթի քննարկում և ընտրված մասնակցին որոշման մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Ա/Ձ Հակոբ Առաքելյանի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթի քննարկում և ընտրված մասնակցին որոշման մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1.1 Քննարկելով Ա/Ձ Հակոբ Առաքելյանի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթուղթը՝ հանձնաժողովը որոշեց դա գնահատել հրավերի պահանջներին համապատասխան:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց Ա/Ձ Հակոբ Առաքելյանի որակավորման հատկանիշները և ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակից և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| **Գնահատող(ԳԱՊ)** | Ս. Աբովյան |
| **Գնահատող** | Ա. Պապյան |
| **Գնահատող** | Ա. Մաղաքյան |
| **Գնահատող** | Հ. Բաղալյան |
| **Գնումները համակարգող՝** | Ռ. Մարդոյան |